

№ 11 ՆՈՅԵՄԲԵՐ 1909

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միքայէլ Նալբանդեան . . . . . Պատկեր
Ազատ Աստուածն (ոտանաւոր) . . . . . Մ. Նալբանդեան
Անէծք (ոտանաւոր) . . . . . Ղ. Աղայեան
Տիտիկ (ոտանաւոր) . . . . . Յ. Աղաբաբ
Մօր խրատը (ոտանաւոր) . . . . . Յ. Աղաբաբ
Ո՛չ, ես միայն հանգստանում էի . . . . . Օր. Ն. Գրիգորեան
Օգնութեան ձեռները . . . . . Պատկեր
Զալտիկ հաւը և ձագ Մարիկը . . . . . Սարգս
Խուզարկութիւնից յետոյ . . . . . Պատկեր
Զին ու թամբաքին . . . . . Քամ. Ս.
Ծեր ուռենին (ոտանաւոր) . . . . . Յ. Պետրոսեան
Անապատան մանուկը . . . . . Ջ. Ց.-Գրիգորեան
Մանուկը և բաղէն . . . . . Շահ-Արմէն

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Խմբագրութիւնից . . . . . Ամբիկ
Ժամանցը Եւրոպայում . . . . . Սիկուլի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՂԲԻՒՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ.—Ներկայ № 11-րդ նոյեմբերի հետ ուղարկւում է ԱՂԲԻՒՐԻՑ նէմը դպրոցական աշակերտուհիներին եւ աշակերտներին՝ 1) **ԱՂԲԻՒՐԻ** XXV **ԱՄԵԱԿ** և 2) **ՏՕՆ** ու **ՀՕՆ** գրքերը, որոնք Աղբիւրի յօբելեանական մանաժողովից եւ աշխատակիցներից որոշ թըւով ընծայաբերւած էին խմագրութեանս, իսկ մենք էլ նուիրում ենք մեր պատանի բաժանորդներին։

ՏԱՐԱՁԻ բաժանորդներին չեն ուղարկւում այդ գրքերը։

ԱՂԲԻՒՐԻ հոկտեմբերի №-ը, որ ամբողջապէս նուիրւած է ՇԻԼԼԷՐԻՆ նրա ծննդեան 150-ամեակի առիթով, բաժանորդներին կուղարկւի դեկտեմբերի №-ի հետ։

ԱՂԲԻՒՐՆ ամսական յաւելւածներով, նուէրներով պօստի ծախսով 25 կոպ.

XXVIII ՏԱՐԻ

ԲԱՑՒԱԾ Է ԱՌԱՋԻԿԱՅ 1910 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XXI ՏԱՐԻ

ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

Հրատարակւում են ճոխ, բազմաբովանդակ, մանանկցութեամբ մեր եւ եւրոպական ակնյայտնի գրականագէտների, հրապարակախօսների, լրագրողների, արուեստագէտների եւ գեղագէտների։

ՄԵՐ ՀՐԱՒԷՐԸ

Որովհետեւ **ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ** պատկերազարդ հանդէսների տարածման համար խմբագրութիւնը ոչ մի ջանք **չէ** գործադրում, պրօպագանդ չէ անում, այժմը բացառապէս նուիրած լինելով թերթերի բազմաբովանդակ, ճոխ և իմաստալից հրատարակելուն, ուստի այսու հրաւիրում է հայութեան բոլոր խաւերում գործողներին սթափւել իրանց սֆինքսային սառնասրտութիւնից և տարածել ազգի մէջ ճշմարիտ դաստիարակութեան, գիտութեան ու արուեստին նուիրած **ԱՂԲԻՒՐ** մանկավարժական պատկերազարդ ամսագիրը մանուկների եւ պատանիների համար, որ թեւակոխում է իր 28 **ՏԱՐԻՆ** և **ՏԱՐԱԶ** գեղագիտական, գրական, հասարակական, քննադատական, քաղաքագիտական պատկերազարդ հանդէսը, որի 20 տարին լրացնելուն և 21-րդ տարեշրջանը մտնելու առիթով, առաջիկայ 1910 թ. համար դպրոցական աշակերտ ունեցող ընտանիքների համար **ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ** տարեկան բաժանորդագինը 10 ռուբլուց իջեցնում ենք 5 ր. (հինգ ր.)

ՊՐԷՄԻԱՆԵՐՆ ԵՆ

1) **ՎԵՀՔՕՐԷ ՈՐՏՔԻՈՍ** Ք. Կաթողիկոսի-բազմազոյն, 2) ս. Սահակի, 3) ս. Մեսրոպի, 4) Միքայէլ Նալբանդեանի մեծադիր պատկերները, որ բաժանորդն ստանում է նոր տարւայ **ՏԱՐԱԶԻ** №-ի հետ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. **ԱՂԲԻՒՐ** դպրոցական աշակերտուհիների և աշակերտների համար տարեկան ՄԷԿ ՐՈՒԲԼԻ (1 ր.)։

2. **ԱՂԲԻՒՐ** և **ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ** ս. ՍԱՀԱԿԻ, ս. ՄԵՍՐՈՊԻ և ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ մեծադիր 3 պատկերներով տարեկան ԵՐԿՈՒ ՐՈՒԲԼԻ (2 ր.).

3. **ԱՂԲԻՒՐ** դպրոցների, զրաղարանների, հասատութիւնների և հասակաւոր բաժանորդների համար 3 ր. (Արտասահման 5 ր.)

4. **ԱՂԲԻՒՐ** և **ՏԱՐԱԶ**, Աղբիւրի Ակունք դպրոցական աշակերտի հացէով, ընտանիքների համար, տարեկան 10 ռուբլու փոխարէն 5 ր. Մինչև դեկտեմբ. 15-ը ստորագրող բաժանորդներին կուղարկւին և պրէմիաները՝ ՎԵՀԱՓԱՌ ԻՋՄԻՐԼԵԱՆԻ բազմազոյն ձիթանկար և ս. ՍԱՀԱԿԻ, ս. ՄԵՍՐՈՊԻ, ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ մեծադիր 4 պատկերներն էլ։ Դեկտեմբերի 15-ից յետոյ բաժանորդագրող աշակերտները վճարում են այդ պրէմիաների համար մէկ ռուբլի, այսինքն փոխանակ հինգ ռուբլու վեց ՐՈՒԲԼԻ։

5. **ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ**, Աղբիւրի-Ակունք, Յաւերաժներ-ներ պրէմիաները դպրոցների, հասատութիւնների, գրադարանների և հասակաւոր բաժանորդների համար՝ տարեկան 10 ր. Արտասահման 18 ր. կամ 50 ֆր.

Սոյն տարւայ դեկտեմբերի 23-ին **ԱՂԲԻՒՐԻ** *և* **ՏԱՐԱԶԻ** *1910 թ. 5000 ԲԱԺԱՆՈՐԴ (№№)-երի մէջ վիճակ կրգցւին 500 առարկաներ՝ Արծաններ, Գրքեր, Պատկերներ, Դպրոցական առարկաներ, Սեղանի ընտիր զարդեր, Աքսեսներ պօստ-կարտերի և լուսանկարների համար, Ժամացոյցներ՝ ծոցի, սեղանի վրայ դնելու, Պատի օրացոյցի համար ընտիր բելիէֆ և փառահեղ կարտօններ Գրասեղանի զարդեր, Օղազնացքի մոդելներ և այլն, և այլն։*

Այդ առարկաները դեկտեմբերի մէկից Գրական-Գեղագիտական Սալոնում դրած են ի ցոյց 1910 թ. բաժանորդագրողների։

Վիճակահանութեան մասնակցում են անխտիր բոլոր բաժանորդները՝ լինեն նոցանք դպրոցական աշակերտ

1 ր. վճարողներ, թէ 2 ր.։ Աղբիւր և Տարազ միենոյն հասցէով ստացող բաժանորդներին տրւում է 2 №№։ Վիճակին մասնակցելու համար բաժանորդը չըպէտք է աւելորդ վճար անէ, վիճակահանութիւնը բոլորովին **ՁՐԻ Է**։

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ

Դպրոցների աշակերտներն ու աշակերտուհիները, որոնք 1910 թ. բաժանորդ պիտի լինեն **ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻՆ**, *(միենոյն հասցէով) արտօնութիւն ունեն իրանց խմբական (ոչ պակաս 50 հոգուց) լուսանկարը բաժանորդագրութեան հետ ուղարկել մեզ և 1910 թ. 45 օրւայ ընթացքում ստանալ այդ լուսանկարից արտատպուած 50 դիւժին (600 հատ) պօստ-կարտ։*

Նրանք, որոնք կը կամենան աւելի օրինակներ ունենալ, իւրաքանչիւր 10 դիւժնի համար ճանապարհածախսով հանդերձ վճարում են 1 ր.—50 կոպ.

ԱՂԲԻՒՐ կամ՝ մայր-ձայն վերոյ բաժանորդ չէ ընդունում։

Հասցէն՝ ТИФЛИС, Редакція „АГБЮР-ТАРАЗ“.

TIFLIS. (Caucase) Rédaction „AGBÜR-TARAZ“.

Տպարան «Կուլտուրա» Ընկ. Վէլեամինովսկ. փող., № 18.

Типогр. Т-ва „КУЛЬТУРА“ Вельяминовская ул., № 18.



XXVII ԱՂԲԻՒՐ XXVII

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

ՄԵՆՈՒԿՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քառասներորդ տարի 1909 № 11. Նոյեմբեր

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան

Միքայէլ Նալբանդեան

Ծննդեան 80-ամեակի առիթով։

Ազատն Աստուած այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հոգանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգևել,
Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի
Եւ իմ անզօր թևերով
Ազատութիւն գրկեցի։

Մինչ գիշերը անհանդիստ,
Օրօրոցում կապկապած,
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած,
Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել,
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել։

Թոթով լեզուիս մինչ կապերը
Արձակուեցան, բացուեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խօսքն, որ ասացի,
Զէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ.
Ազատութի՜ն դուրս թռաւ
Իմ մանկական բերանից։

«Ազատութիւն», ինձ կրկնեց
Ճակատագիրը վերևից.
«Ազատութեան դու զինուոր
Կամիս գրուիլ այս օրից։
Ո՛հ, փշոտ է. ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կըսպասէ.
Ազատութիւն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է»։
—Ազատութի՜ւն,—գոչեցի.—
Թող որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դաւ դնէ թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչ անարգ մահու սիւն
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար ազատութի՜ւն։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

ԱՆԷԾՔ

Երկու հոգի՝
Հայր ու որդի՝
Խորհուրդ արին
Եւ վճռեցին,
Որ վեր կենան,
Որսի գնան։

Եւ գնացին...

Ու ներս մտան
Մի խիտ անտառ,
Ուր և գտան
Մի որբ կիտար...

Որդին ասեց՝
Թող ես խփեմ.
Հայրն արգելեց.
Մեղք է, ասեց,
Թող ես խփեմ.

Թող ես ընկնեմ
Անէծքի տակ,
Եւ ոչ թէ դու
Զահէլ օրով.
Դու ուղղ մնա
Հօրով-մօրով։

Գլորեց մի քար
Դէպի ներքև.
Եւ հօր առջև
Մօր մինուճար
Որդուն դիպաւ,
Լոյսը հանգաւ...

Հայրը խփեց.
Կխտարն ընկաւ.
Որդին շալկեց,
Ճանապա ընկաւ
Մի նեղ շաւղով,
Խոր ձորերի
Անդունդներով...

Մէկ էլ յանկարծ
Մի քարա-այծ
Քէրծի գլխից
Փախած տեղից

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

ՏԻՏԻԿ

—

Տիտիկ արա դու ըստի,
Մ՛յ աղունիկ իմ բալայ,
—Տի՛, տի՛, տի՛կ...
Տիտիկ արա, քիչ նստի,
Հետս անուշ բըլբըլա՝,
—Լա՝, լա՝, լա՝...

—

Տիտիկ արա՝, դինջացի,
Ցաւդ տանի քո մէրը,
—Մ՛խ, ա՛խ, ա՛խ...
Տիտիկ արած քիչ կացի,
Բեզրած են քու տոտերը,
—Ո՛ւֆ, ո՛ւֆ, ո՛ւֆ...

—

Ջա՛ն... իմ բալէն, իմ ջանէն
Տիտիկ արեց ինքնիրան,
—Ի՛ֆ, ի՛ֆ, ի՛ֆ...
Շարժելով նա իր ջանէն՝
Հետս խօսեց կըլպըլտան,
—Ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն...

Յակ. Աղաբաբ.

ՄՕՐ ԽՐԱՏԸ

—

Գնա, դաս ա՛ռ,
Բաղդասար,
«Ով կը կարդայ՝
Նա մարդ ա»։
Լսի՛ մօրդ
Ու օրդ
Պարապ-սարապ,
Բեթարափ 1)
Մի՛ անց կացնի,
Փչացնի։
Գնա՛, որդի՛,
Ա՜յ որդի,
Կարդա՛, գրի՛,
Նկարի,—
Էդպէս պարապ
Քեզ եարաբ 2)
Ո՞վ կը գթայ,
Հաց կը տայ։
Վեր կաց, ասի՛,
Ա՛յ բալա՛,
Գնա դասի,
Շուտ արա.
Տէս, քո ընկեր
Մուքէլը
Ո՜նց սէր ունի
Ուսումի։

Յ. Աղաբաբ.

---

1) Յիրուցան։ 2) Երանի թէ։

Ո՛Չ, ԵՍ ՄԻԱՅՆ ՀԱՆԳՍՏԱՆՈՒՄ ԷԻ

Մի վեցամեայ մանուկ, որ անտանելի յամառ ու կամակոր երեխայ էր, շարունակ լալիս էր, հետն էլ ճչում ու բղաւում, եթէ որևէ բան իր ուզածի պէս չէին կատարում։

Մի օր սովորական լացի ու բղաւոցի ժամանակ, նրա մօր մօտ հիւր եկաւ, իսկ յամառ մանկիկը չընայելով մօր խնդրելուն, որ դադարի լաց լինելուց և չբխանգարի իրանց խօսակցութիւնը, աւելի ու աւելի էր բղաւում. այդ ժամանակ հիւրը դիմեց նրա մօրն ու ասաց. «Թող ինչքան ուզում է բղաւի, ուշադրութիւն մի՛ դարձնիլ, ինքն իրան ձայնը կըկտրի»։

Այս խօսքերի ժամանակ մանկիկը ձայնը կտրած՝ ուշադրութեամբ լսում էր հիւրին։

Եւ հիւրը դարձաւ նրա մօրը.

—Ահա, տեսա՞ք, որ ձայնը կտրեց...

—Ո՛չ,—բարկացած ձայնեց չարաճճին, —ես միայն հանգստանում էի...

Օր. Ն. Գրիգորեան

Օգնութեան ձեռները



ՉԱԼՏԻԿ ՀԱՒԸ ԵՒ ՁԱԳ ՄԱՐԻԿԸ

—

Գարնան գեղեցիկ առաւօտներից մէկն էր։ Աքաղաղը վաղուց էր երգել իր վաղորդեան ծուղրուղուն։ Մեծ ու փոքր, ծեր ու ջահէլ շտապում էին դաշտ՝ թերի թողած գործը աւարտելու։ Կով, եզ, ոչխար ու գառներ, այծ ու ուլեր խումբ-խումբ տարուում էին հովիւների հսկողութեան տակ դէպի դաշտ՝ արօտատեղերում գարնան նորաբոյս խոտերն արածելու։ Թռչունները առաւօտեան թարմ օդը ճեղքելով, ծառից ծառ, թուփից թուփ թռչկոտալով՝ գարնան գալուստն էին երգում։

Աքիր նանն էլ, կուտի ամանը ձեռքին դուրս գալով տնից, իր սովորական ջո՛ւջուն կանչելով, հաւերին, սագերին ու բադերին կուտի հրաւիրեց, որ կուտ տայ ու գնայ իր ճախարակը մանի։

Հաւերը թռթռալով, սագերն ու սագիկները օրօրուելով, բադերն ու բադիկները տոտա-տոտա անելով, Աքիր նանի «ջուջուն» լսելուն պէս, ոմանք պարտէզից, մէկը հաւաքնից, մի քանիսն էլ բակի այս ու այն անկիւններից, մի երկուսն էլ դռից իրար առաջ կտրելով շտապեցին կուտի, և չանցած մի քանի վայրկեան՝ Աքիր-նանին շրջապատեցին։

«Իմ կըրկըչան հաւեր, տխլիկ-մխլիկ հաւ մարիկներ, ոսկէփետուր աքլորիկներ, իմ արծաթփետուր սագեր, փափլիկ, թմբլիկ սագիկներ, կարճիկ-մարճիկ բադեր ու կարմրատոտիկ-մօտիկ բադիկներ, կերէք իմ բերած ցորնի հատիկներ ու գնացէք քյոչ արէք, պարտէկում ճիճուներ որսացէք»։

Ասաց Աքիր-նանը, կուտի ամանը նրանց առաջ դարդակեց ու մտաւ տուն։

Կըտ-կըտ-կըտ։ Հաւերը, սագերն ու բադերը, որ Աքիր նանի միակ հարստութիւնն էին կազմում, կտուցները գետնին խփելով, կըտ-կըտ-կըտ անելով, ցորնի հատիկներին վերջ տալուց յետոյ ցրւեցին դէպի պարտէզ ու բակի զանազան կողմերը և սկսեցին հատիկներ ու ճիճուներ որոնել։

Զալտիկ հաւն էլ, որ եղած հաւերի մէջ ամենագեղեցիկն էր իր գոյնզգոյն փետուրների շնորհիւ և որի պատճառով Աքիր նանը նրա անունը մկրտել էր Զալտիկ հաւ, իր միանաճար ձագ Մարիկի հետ քաշուեց մեծ թթենու տակ և սկսեց կուտակուած աղբը յետ ու առաջ անել։

— Մայրիկ ջան, չէ՞նք գնալու պարտէզ. չէ՞որ Աքիր նանը պատւիրեց կուտից յետոյ գնալ պարտէզ, ասաց ձագ Մարիկը բաւական ժամանակ անցնելուց յետոյ, նկատելով որ մայրը մտադրութիւն չէ ցոյց տալիս թթենու տակից հեռանալ։

Զալտիկ հաւը լուռ էր և այնպէս էր ցոյց տալիս, թէ չէ լսում ձագ Մարիկի ձայնը ու անդադար կուտակուած աղբը յետ-յետ էր անում, բայց կտուցովը ոչինչ չէր ընկնում։

— Գնանք, մայրիկ ջան, գնանք, մեր հարևան սագերն ու բադերը վաղուց են գնացել, ասաց Մարիկը մօտենալով մօրը։

—Ո՞ւր, ձագուկս։

—Պարտէզ. չէ՞որ Աքիր-նանը մեզ պատւիրեց

կուտից յետոյ գնալ պարտէզ, կրկնեց նորից ձագ Մարիկը։

—Պարտէզ։

— Այո, մայրիկ ջան, պարտէզ։

— Ինչու գնալ։

— Քշուշ անելու, մայրիկ ջան, քշուշ. այնտեղ հատիկներ և շատ ճիճուներ կան։ Բացի այդ, մեր հարևան սագերն ու բադերն այնտեղ են, կարող ենք ուրախ ժամանակ անցկացնել նրանց հետ։ Գնանք, մայրիկ ջան, գնանք։

—Ոչ, ձագուկս, ոչ. պարտէզը հեռու է և վտանգաւոր, վտանգաւոր այնքան, որ գնացողը շատ անգամ յետ չի գալիս։

— Ինչու։

— Այնտեղ, ձագուկս, սրատես չար ուրուրը, մեր պապերի ոխերիմ թշնամին, երկնքի երեսին շարունակ պտտելով, յարմար րոպէի է սպասում, որ մեզանից մէկն ու մէկիս իր սուր ճիրաններով յափշտակի և տանի իր ձագերի կերակուր դարձնի։ Վայ թէ գնացինք, ձագուկս, ուրուրի ձագերին բաժին ընկանք, ո՞վ ունենք, որ մեզ ազատի այդ չար թշնամուց, երբ նա կըյարձակուի մեզ վրայ։

— Աքիր նանը։

— Աքիր նանը։

— Այո, մայրիկ ջան, Աքիր նանը։

— Աքիր նանը վաղուց է մոռացել մեզ, ձագուկս, հիմա նա տանը իր ճախարակն է մանում, իր սիրելի Համոյի ու Սիմէօնի գուլբաների թելը հասցնելու համար։

— Չէ՞որ Աքիր նանը մեզ էլ է շատ սիրում, մի՞թէ այդքան շուտ կըմոռանայ մեզ։

—Այո, ձագուկս, նա միշտ և շարունակ իր միտն է պահում իր Համոյին ու Սիմէօնին, իսկ մեզ

մտաբերում է այն ժամանակ, երբ իրան հարկաւոր ենք լինում։

— Բայց չէ՞որ Աքիր նանն է, որ մեզ շարունակ կերակրում է, գիշերելու տեղ է տալիս, իսկ ջուրը միշտ լիք ամանով է դնում մեր առաջ։

— Միամիտ ճագուկս, ո՞վ կարող է մոռանալ Աքիր նանի արածները. բացի այդ, որ դու գիտես, նա մեզ տալիս է մեծ ու ընդարձակ բակ ազատ շրջելու համար, իսկ պարտէզի դռները շարունակ բաց է թողնում մեր առաջ, որ այնտեղից հատիկներ ու ճիճուներ որսանք, գէրանանք, որովհետև այդ գէրութիւնը նրան հարկաւոր է։

— Մեր գէրանալը նրան ի՞նչ օգուտ կարող է բերել։

— Շատ պարզ է, զաւակս. Աքիր նանը ոչ թէ միմիայն օգտւում է մեր գէրութիւնից, այլ և մեր փետուրներից, այն փետուրներից, որոնք մեզ ցրտից պահպանում են, ու մեր կաթնահամ ձւերից։

— Այսինքն, Աքիր նանը մեզ պահում է միմիայն իր օգտի՞ համար, ասաց ճագ Մարիկը աւելի մօտենալով մօրը։

— Այո, ճագուկս. մենք նրան ենք պատկանում ոտով-գլխով, մի խօսքով՝ գերի ենք նրա ձեռքին, հասկացա՞ր, ճագուկս։

— Հասկացայ, մայրիկ ջան, հասկացայ։ Այսինքն նա մեր տէրն է, իսկ մենք նրա ծառաները։

— Բացի այդ, ճագուկս, Աքիր նանը ո՛ւր ցանկանայ, կարող է ուղարկել, ո՛վ կամենայ, կարող է մեզ նրանից գնել և մինչև անգամ...

— Եւ մինչև անգամ ի՞նչ, մայրիկ ջան. ասա՛, ասա՛, ինչո՞ւ ես ծածկում։

— Հանգստացիր, ճագուկս, դեռ փոքր ես, չեմ ուզում քո մատաղ սիրտը հոգսերով ու վշտերով պատել. սպասիր, երբ մեծանաս, բոլորը, բոլորը կը

պատմեմ քեզ. միայն այսքանով բաւականացիր, որ մենք Աքիր նանին ենք պատկանում և մեր կամքն ու կեանքը նրանից է կախուած։

— Հասկացայ, մայրիկ Ջան, հասկացայ. այսինքն Աքիր նանը կարող է վարուել մեզ հետ այնպէս, ինչպէս մենք մեր որսած հատիկների կամ ճիճուների հետ։

— Ուղիղ այդպէս, ձագուկս, բայց ի՞նչ արած, պէտք է համբերութեամբ հաշտուել այն բախտի հետ, որ մեզ է վիճակուած, ապա թէ ոչ՝ կորած ենք։

— Համբերութեամբ հաշտուել այն բախտի հետ, որ կեանքն է խլում, արիւն է ծծում։

— Այո՛, ձագուկս, պէտք է հաշտուել, քանիսոր ժամանակը այդ է պահանջում. այլապէս ի՞նչ կարող ենք անել, երբ մարդիկ մեզ համար ամենայն օր դանակներ և սրեր են պատրաստում։

— Հեռանալ այստեղից, գնալ մի այնպիսի երկիր, ուր կեանքի ու կամքի ազատութիւն կայ, ուր մեր ցեղակից եղբայրներն ու քոյրերը ազատ են ապրում։

— Ի՞նչ ասածի պէս երկիր չկայ, ձագուկս. ուր էլ որ գնանք, մեր ցեղակից եղբայրներն էլ, քոյրերն էլ նոյն կապանքներով են կապուած, նոյն բախտն է նրանց վիճակուած։

— Եթէ այդպէս է, մայրիկ Ջան, բարձրանանք օդում կամ սեպաձև սարերի գլխին ապրենք, մարդկանցից հեռու. ինչո՞ւ մնանք այստեղ, որ մարդիկ մեզ հետ այնպէս վարուեն, ինչպէս մսավաճառը ոչխարի հետ։

— Ինչո՞վ բարձրանանք սեպաձև սարի գլուխը կամ ի՞նչպէս հասնենք օդին, որ մեզանից շատ հեռու է։

— Թևերով, մայրիկս, թևերով. չէ՞ որ մենք էլ թեւեր ունենք, ինչպէս միւս բոլոր թռչունները, ասաց

ձաղ մարիկը բարձրացնելով իր փոքրիկ թեւերը, որոնք նոր էին աղւամազից ազատւել։

—Բաւական է, ձագուկս, մի յիշեցնիլ հին-հին վշտերս. չէ՞որ, ասացի, դեռ փոքր ես, երբ մեծանաս, բոլորը կըպատմեմ քեզ։

—Պատմիր, մայրիկս, պատմիր. ինչո՞ւ ես ծածկում այն, որ մի քանի տարուց յետոյ յայտնի է լինելու ինձ։ Ասա՛ ինձ, մի՞թէ թռչելու իրաւունքից էլ ենք զրկւած։

—Այո, ձագուկս, ազատ թռչելու իրաւունքից էլ ենք զրկւած։

—Ինչո՞ւ, ասա՛, ասա՛, պատմիր. ապա ինչի՞ համար են այս թեւերը, ասաց ձաղ Մարիկը, աչքերը ձգելով մօր աչքերին և գլորելով երկու խոշոր կաթիլ արցունք։

—Ահա ինչու ազատ թռչելու իրաւունք չունենք, ձագուկս։ Դու գիտես, որ ամեն անգամ ջուր խմելու, ամեն կում անելու միջոցին մենք մեր աչքերը ձգում ենք երկնքին, շնորհակալութիւն յայտնելու այնտեղ բազմող մեզ կառավարող թագաւորից, նրա առատաձեռնութեան համար, որ մեզ շնորհել է առատ ջուր։ Մեր պապերից մէկը, Ցատիկ հաւը, մի անգամ ջուր խմելիս, մոռացմամբ վերջին կումը անելու միջոցին իր աչքերը չէ ուղղում երկնքին, այդ պատճառով նրան մեր թագաւորը որդոց որդի զրկում է ազատ թռչելու իրաւունքից։

—Իսկ աչքերը երկինք ուղղելու իրաւունքից չըզրկւեցի՞նք, որ ամեն անգամ ջուր խմելիս քանի կում ենք անում, այնքան անգամ էլ մեր աչքերը ուղղում ենք երկինք։

—Զրկւեցինք, բայց մենք մեր աչքերը ուղղելով երկինք, մեզ կառավարող թագաւորից ներում ենք խնդրում։ Անցել են դարեր, մեռել ու անհետացել են հին օրերի սովորութիւնները։ Մի խօսքով,

ձագուկս, փոխուել է ժամանակը, բայց մեր պատիժը մնում է պատիժ, թագաւորի վճիռը մնում է վճիռ։ Չէ՞որ պապերի մեղքը թոռներն են քաշում, Մարիկս։ Ահա ինչու ազատ թռչելու իրաւունքն էլ չունենք։

—Իսկ մեր հարևան սագերն ու բադերը։

—Զըգիտեմ, միայն աչքս բաց եմ արել, նրանց էլ մեր օրումն եմ տեսել. նրանք էլ մեզ պէս գերի են մարդկանց ձեռքին. ինչպէս մեզ հետ, մարդիկ նրանց հետ էլ այնպէս են վարուում։

—Գնանք, մայրիկ, գնանք գոնէ այս բակից։

—Ո՞ւր, ձագուկս. ուր որ գնանք, մեր կեանքը նոյնն է, մեր պատիժն անփոփոխ. աւելի լաւ չէ՞, ուր ծնուել ենք այնտեղ էլ մնանք, մինչև, ո՞վ գիտէ, գուցէ մի օր մեր թագաւորի գութը զարթի ու մեզ իրաւունք տայ ազատ թռչելու։

***

«Կուտ, կուտ-կուտ, իմ կըրկչան հաւեր, տըխլիկ-մըխլիկ հաւ մարիկներ, ոսկէփետուր աքլորիկներ, իմ արծաթփետուր սագեր, փամփլիկ-թմփլիկ սագիկներ, կարճիկ-մարճիկ բադեր, կարմիր-տոտիկ բադիկներ, եկէք, իմ բերած ցորենի հատիկները կերէք ու գնացէք թառ ելէք, գիշերը հանգիստ քնեցէք»։ Աքիր նանի ձայնը այս անգամը ձագ Մարիկին չըկարողացաւ տեղից շարժել. բոլորը գնացին կերան կշտացան, բայց Զալտիկ հաւն ու ձագ Մարիկը մնացին իրանց տեղը մեխուած։

Մարգո՝

Խուզարկությունից յետոյ։



ՁԻՆ ՈՒ ԹԱՄԲԱՔԻՆ

—

Հայը մի տեսքով գեղեցիկ, բայց մանգալու մէջ խիստ ալարկոտ ձի ունէր։ Նրան բանացնելուց զզուելով մի օր կապը բռնեց, որ տանի քաղաքում մի կերպ ծախի, էդ ցաւից ազատուի։ Գնալիս պատահեց մի Թուրքի, որ լիք խուրջինն ուսին գնում էր։

—Բարի աջողում, ա՛ Թուրք, ո՞ւր ես գնում։

—Ասածու բարին, ա՛ հայ, քաղաք եմ գնում ապրանքը ծախելու։

—Խուրջինումդ ի՞նչ ապրանք ունես, Թուրք ախպեր։

—Շատ ընտիր, պատուական Թամբաքի, հայ ախպեր։

Հայը մի երկու բոպէ մտածելուց յետոյ խօսեց.

—Թամբաքիդ որ ծախես, փող պիտի տան, դու էլ էդ փողը ապրանքի պիտի տաս. իմ ձիուց էլ լաւ խալիս ապրանք. արի Թամբաքիդ տուր, իմ ձին վեր կալ, էլ ոտ չը ծեծենք, քաղաք գնանք, ճամբակիսից մեր տները գնանք։

Թուրքը ձիու տեսքին նայեց, քէֆն եկաւ, սրտում ուրախացաւ հայի միամտութեան վրայ, որ առանց իրա խուրջինի փտած Թամբաքին տնդղելու քեահլան ձին տալիս է։

—Համաձայն եմ, հայ ախպեր, ասեց Թուրքը։ Թէպէտ իմ Թամբաքին նաղդ փողով էլ կարող եմ ծախել, բայց երբ ուզում ես ձիու հետ փոխեմ, խաթրդ չեմ կոտրիլ։

—Ա՛ռ ձին, Թուրք ախպէր, տա՛ր, խէրը տե՛ս։

—Ա՛ռ Թամբաքին, հայ ախպէր, դու էլ տա՛ր, խէրը տե՛ս։

—Թուրք ախպէր, սպասիր, խօսեց հայը. առուտուրը վերջացրինք, արի հիմայ ամեն մէկս մեր ապրանքի բնութիւնն ասենք։

—Դրան էլ համաձայն եմ, ասեց Թուրքը. կուզեմ՝ առաջինը ես ասեմ։ Իմ Թամբաքուի քնութիւնն էսպէս է, գլխիդ մատաղ, հայ, լսիր։ Ամենից առաջ սուր դանակով պէտք է լաւ մանր կտրտես, յետոյ կտրտած Թամբաքով պէտք է չիբուխդ փուչ-փուչ, առանց սխմելու լցնես, յետոյ ամեն տեսակ փէտի կրակը Թողես, միայն դաժի կարմիր պէծը չիբուխիդ վրայ մշտական պահես։ Եթէ էս ասածներս կատարելուց ետ Թամբաքիս ծուլութիւն անի, չրվառուի, քու արևին մատաղ, հայ, Թամբաքին ետ բեր մեր գեղը, Աստծու հալալ իմ ապրանքն է։

Հայը ժպտալով պատասխանեց.

—Թուրք ախպէր, շատ շնորհակալ եմ, որ Թամբաքիդ գործածելու հանգերը մի առ մի ինձ սովորցրիր։ Հիմի հերթն իմն է, որ ձիուս որպիսութիւնն ասեմ։ Լսիր, գլխիդ մատաղ, Թուրք։ Ամենից առաջ պէտք է քեզ համար կանոն շինես ու մտքումդ պահես, որ դարիդուս բարձրանալիս ձիուս վրայ չընստես, յետոյ դիւրան դաշտ տեղը կապը հանգիստ բռնած միշտ ետևիցդ քաշես, միայն երբ գլխավէր տեղ պատահի, վրէն նստես ու դամշով կամ ճիպոտով քշես հա՛ քշես։ Էս իմ պատուէրները ճշտութեամբ կատարելուց ետ եթէ ձիս ծուլութիւն անի, չըգնայ, արևիդ մեռնեմ, Թուրք, ձին ետ բեր իմ դուռը, Աստծու հալալ իմ ապրանքն է։

Բամ. Ս.



Ծ Ե Ր

ՈՒՌԵՆԻՆ

—

Հաստաբուն ուռին լալիս էր մի օր՝
Առուակի ափին կախուած գլխիկոր։
«Ինչո՞ւ ես լալիս, իմ ազի՛զ ընկեր»,
Ասաց ուռենուն գետը զովարեր։

—«Լ՞ռ, խոր հառաչեց սգաւոր ուռին,
«Ես մատաղ լինիմ քո անուշ ջրին։
«Մէկ լաւ նայիր ինձ՝ տես ինչ եմ դառել.
«Կերել է ճիճուն, արեւն ինձ վառել.

«Էլ չեմ ապրի, իմ դարը անցաւ,
«Տերեւս թափուեց, ճիւղս չորացաւ։
«Թէ մի բան ունիմ սրտիս միխիթար,
«Արմատէս ելած այն ուռն է դալար։

«Պահի՛ր դու նրան քո անուշ ջրով,
«Զուգիր, զարդարիր մատաղ ճղներով.
«Ու թող քո վճիտ ջրերի միջից
«Իր դէմքը տեսնի մատաղ ուռենին,
«Ու սիրտը լցի մանուկ հրճւանքով,
«Եւ քո խոխոջին ձայնակցէ երգով։

«Դէ՞ռ, անուշ ընկեր, քեզ վերջին բարեւ,
«Եւ քեզ, ծերուկիս ժառանգ, նոր արեւ։
«Կացիններն առած՝ գալիս են մարդիկ,
«Որ ինձ կտրատեն, անեն վառելիք...

Յ. Պետրոսեան

ԱՆԱՊԱՍՏԱՆ ՄԱՆՈՒԿԸ

(Զասօղիմակու «Կեանքի հէքիաթներից»)

I

Խուլ ու ձիւնապատ ճանապարհով գնում էր մի մանուկ,— փոքրիկ, նիհար, հագիւ ծածկւած ինչ-որ կեղտոտ ցնցոտիներով և բոբիկ ոտներին հագած ծակ ոտնամաններ: Հին, պատառոտած գլխարկի տակից երևում էին նրա սև, խիտ ու ոլորուն մազերը: Նրա սևաթոյր գունատ դէմքը սաստիկ յոգնած էր երևում. խոշոր, սևորակ աչքերը վշտագին յառած էին դէպի հեռուն:

Սառնամանիք էր. կէս գիշերից սկսած փչում էր ցուրտ քամի: Սառնամանիքից ու վշտից դուրս քամւած արցունքները դողում էին փոքրիկ ճամբորդի արտանունքների վրայ: Նրա ցնցոտիների և սև գանգուրների վրայ փայլում էր արծաթափայլ եղեամը:

Վերջապէս, հեռուում, ձիւնապատ հարթավայրի մէջ տեղը, երևաց մի մեծ գիւղ, և մանուկը հառաչեց... Խեղճը յոգնել էր և հագիւ էր քարշ տալիս ոտները. բայց հիմա՝ տեսնելով մարդկային բնակավայրը՝ նա հաւաքեց իր վերջին ոյժը և աւելի առոյգ քայլեց դէպի առաջ: Նա մտածում էր՝—բարի մարդիկ թոյլ կը-տան, որ ինքը տաքանայ, կըկերակրեն. կարելի է, կըգտնի և այնպիսի մէկը, որ կըգուրգուրայ իրան: Ծաղիկը դէպի արևն է ձգտում, իսկ մանուկը գուրգուրանք ու սիրող սիրտ է որոնում:

Երբ մանուկը մօտեցաւ գիւղին, տիրեց երեկոյեան մթնաշաղը: Պատուհաններում արդէն փայլփլում էին կարմիր կրակները, իսկ երկնքում վառւում էին աստղերը:

II

Մանուկը մօտեցաւ առաջին պատահած տանը, զգուշութեամբ ծեծեց պատուհանի փեղկերը և ամբողջովին դողալով ցրտից՝ ողորմելի ձայնով ասաւ.

—Բարի մարդիկ, թոյլ տուէք ինձ գիշերելու:

Մի ինչ-որ պառաւ երևաց շեմքում:

Զմեռային գիշերուայ կապոյտ կիսախաւարից՝ սևորակ աչքերը յուսով ու երկիւղով դարձան դէպի նա։

—Այդ ո՞վ է,—բարկութեամբ վնիփվնթաց պառաւը։ Մանուկի արտաքին տեսքից և խօսելուց պառաւը իսկոյն հասկացաւ, որ նրա առաջ կանգնած է հրէայ մանուկ, և չարութեամբ նայելով նրա վրայ՝ զգւանքով ֆշշացրեց օձի պէս.

—Ո՛ւհ, ջհուդի՛ լակոտ։ Գնա՛ կորի՛ր... հեռացի՛ր։

Մանուկը տարակուսանքով նայեց պառաւին, յետ մղւեց ու հեռացաւ։ Մօտենալով հետևեալ տանը և պատուհանը թակելով՝ նա նորից երկչոտ, աղերսագին ձայնով ասաց.

—Թոյլ տուէք մի քիչ տաքանամ, բարի մարդիկ։

Հէնց որ նա արտասանեց այդ խօսքերը, լսեց մի տղամարդու կոշտ ձայն.

—Ես քեզ ցոյց կըտամ, ջհուդի՛ լակոտ... Հեռացի՛ր, քանի ողջ ես...

Եւ ամեն տեղից, ուր էլ դիմում էր մանուկը իր արտասուագին խնդրով, նրան հալածում էին շան նման։ Միայն մի հին, կիսախարխուլ խրճիթում մի աղջիկ խղճաց անտապատան մանուկին։

—Մայրիկ,—ասաց նա,—նայի՛ր, տե՛ս ինչպէս սառե՛լ է խեղճը։ Ներս թողնենք նրան...

—Ջհուդի՞ն ներս թողնել. տե՛ս ի՞նչ է մտածում,—բղաւեց նրա վրայ մայրը։

Վերջապէս, փոքրիկ ճամբորդը պատահեց մի խումբ երեխաների։ Այստեղ նրա բանը բոլորովին վատ եղաւ։

—Ջհուդ է, տղե՛ր, ջհուդ է,—բղաւեցին խմբի միջից։—Ո՛ւհ, թափառակո՛ն... անիծո՛ւած։

—Տղե՛ր, շունը քշ տանք ջհուդի վրայ... Է՛յ, Բարբոս, կծի՛ր, կծի՛ր նրան... Քշ-քշ-քշ...

Բայց Բարբոսը՝ հանգիստ նստած դարբասի մօտ՝ տարակուսանքով նայում էր իր պատի, արտասուող աչքերով մէկ քշ տուող երեխաներին, մէկ էլ փախչող մանուկի յետևից, ու չշարժուեց տեղից։

Փայտերն ու ձիւնագնդերը թռչում էին մանկան յետևից, որը փախչում էր՝ կուչ եկած և գլուխը թաթիկներով պաշտպանած։

Ազատելով իր հալածողներից մանուկը վերջապէս վազելով հասաւ եկեղեցուն, որ գտնւում էր գիւղի ծայրին, ապա բարձրացաւ եկեղեցու սանդուղքների մի քանի բարձր ու լայն աստիճաններով և դողալով ու հեւալով՝ իր փոքրիկ, նիհար մարմնով կպաւ սառած քարերին...

III

Գիշեր է։ Գիւղը քնել է։ Ամեն տեղ հանգստութիւն է տիրում... Կապոյտ երկնքի վրայ աստղերը աւելի վառ են փայլում։ Սառնամանիքը աւելի է խստանում։

Մանուկը դողում, կուչ է գալիս։ Իզուր նա աշխատում էր փաթաթել իր ողորմելի ցնցոտիների մէջ, իզուր նա աշխատում էր փեշերը վրայ բերել, ձիգ էր տալիս դէպի կուրծքը կամ ուսերը,—ցնցոտիները չէին տաքացնում։ Իզուր նա ոտները կուչ էր ածում իր տակին,—ոտները սառում, փետանում էին ցրտից։ Կամ ականջներն էր տրորում խեղճը, կամ երեսն էր ձեռքերով ծածկում։ Երբ մանուկը բանում էր աչքերն ու գլուխը բարձրացնում, նրան թւում էր, թէ կապոյտ, աստղալից երկինքը անտանելի ցուրտ էր շնչում դէպի նա, ցուրտ էր փչում այդ գիւղից, որը կիսով չափ ծածկւած էր ձիւնով... բայց նրան թւում էր, թէ աւելի սոսկալի է այն ցուրտը, որ փչում է չար ու դաժան մարդկանցից, որոնք քշեցին նրան իրանց ընակարանների շեմքից։

Եւ ինչի՞ համար։ Նա ի՞նչ էր արել նրանց։ Կարելի է, նրանց առաջ մեղաւոր է իր հայրը կամ հանդուցեալ պապը... բայց ինքը, այդ փոքրիկ «ջհուդը», ի՞նչ չարութիւն է արել նրանց։ Ո՜հ, եթէ մէկը բացատրէր, թէ ինչի՞ այդ մարդիկ հեռու են մղում նրան... Նա ամեն բան յիշում է, իր փոքրիկ կեանքը ամբողջովին յիշում է և լաւ գիտէ, որ այդ մարդկանց ոչ մի չարութիւն չի արել, նրանցից ոչինչ չի խլել, նրանց չի վիրաւորել...

Եւ մանուկը այնպիսի՞ դառնութիւն է զգում... Նա ձեռքերով բռնեց գլուխը և աւելի ու աւելի ամուր սեղմւեց սանդուղքի քարերին։ Նրա ուսերը սկսում են ցնցւել զսպւած լացից... Եւ յանկարծ աղիողորմ, կիսախուլ հեկեկանքը դուրս է ժայթքում նրա յոգնած, ցաւած կրծքից, անպատասխան տարածւում է խաղաղ ու սառն օդի մէջ և ինչպէս վերջին դառնագին գանգատ՝ տարւում, բարձրանում է այնտեղ, դէպի վեր, դէպի երկինքը, յաւիտենական աստղերի, մարդկային անարդարութեան այդ լուռ վկաների մօտ։

Մանուկը նիրհում է, քնի մէջ հանդարտ լալիս ու հառաչում է... Իսկ կապոյտ երկնքի վրայ աստղերն աւելի ու աւելի վառ են փայլում նրա թեքւած գլխի վերը։ Սառնամանիքն աւելի է ս սստկանում...

Քնեց մանուկը,—և քնեց այնպիսի պինդ, յաւիտենական քնով, որ հիմա այլևս ոչ մի բան չի կարող նրան անհանգստացնել... Միայն նրա այտերի վրայ դեռ փայլում են արցունքի սառած կաթիլները...

Գիշերն անցաւ։ Վարդագոյն արշալոյսը բռնկւեց արևելքում, ապա կարմիր, գնդաձև արեգակը բարձրացաւ երկրի վրայ՝ նրատաքացնելով, սակայն, սառած երկիրը։ Եւ առաւօտեան վարդագոյն լոյսի տակ, սառած մանուկը՝ ծալւած, կուչ եկած իր թշւառ ցնցոտիների մէջ, թւում էր, թէ մի սև բիծ է սանդուղքի սպիտակ աստիճանների վրայ...

Թարգմ. Զ. Տ.-Գրիգորեան

Մանուկը եւ բազեն

Զրկուած զով հովիտների մարմարէ բոյրերից, աարաբախտ բազէն այժմ հեծծում էր երկաթացանց վանդակի մէջ փակուած։ Թէև նրա վտարանդի հոգին շատ էր ճնշւում իր մռայլ, ցաւոտ խոհերով ծանրաբեռնուած, սակայն և այնպէս նրա երազուն, կայծակեայ հայեացքը միշտ սաւառնում էր անհուն տարածութեան մէջ՝ իր անրջական թեւերով հրաշալի։

Թմրած իր մռայլ խոհերով, կարծես նա յիշում էր իր անցեալի ասպետական արկածները.—յուսահատ վայրկեաններում անցեալի քաղցր վեյիշումները թեթեւացնում են ներկայի սառնութիւնը—մայիսի զարթ արշալոյսն ու վերջալոյսը, երբ ինքը հզօր ու տիրական, անհուն հրճւանքով, ուժգին թափով սաւառնում էր ջինջ եթերի ովկեանում, ու ինչպէս վիթխարի ասպետ, առնական անվեհերութեամբ շրջան էր գործում լայնարձակ հովտի տարածութեան վրայ, կայծակի պէս շամփրելով որսին, ապա յաղթական իջնում էր զով ու զուլալ աղբիւրից անմահական ջուրը ըմպելու։

Այդպէս նա, կանաչ թաւիշ հովիտների արքան՝

արագասլացն բազէն. բայց այժմ տխուր ու մենաւոր հեծեծում էր նեղ վանդակի մէջ փակւած։

Փոքրիկ մանկիկը, որ խաղում էր թաղարի կանաչ, բուրիչ ծաղիկների հետ, տեսաւ տարագիր բազէին և կարծես նրա կուսական ջինջ հոգին զգաց դժբաղդ թռչնի ահաւոր վիշտն ու հոգեկան անօրինակ տառապանքը, կռացաւ և կանաչ թաղարի թարմ, բուրիչ ծաղիկներից մի սիրուն փնջակ կազմելով՝ զգուշութեամբ տեղաւորեց բանտարկւած բազէի վանդակի առաջ։

Տարաբաղդ թռչունը մի անուշ ու անյագ հոտ քաշեց թարմ ծաղկէփնջից, և կարծես նրա բոցոտ աչքերը ինչպէս մի խարոյկ վերստին բուռն վայրագութեամբ վառեցին հեռաւոր ու անկաշկանդ սաւառնումի կարօտով. թափ տւաւ թեերը, լարեց իր ահաւոր հայեացքը... վանդակը հաստ էր ու անխորտակելի։

—Տէս, տէս, մայրիկ, բազէն ինչպէս է թռվռում. ա՜, հոտ է քաշում ձգածս ծաղիկներից։

—Հա, բալիկ ջան, բազէն թռվռում է, բազէն ուրախանում է, նա շատ է սիրում ծաղիկներ, թարմ ծաղիկներից հոտոտել։

—Բա որ էդպէս է, մայրիկ, բազէն ինչի՞ չի թռչում գնում կանաչ հովիտները. գիտէս, մայրիկ, էնտեղ շատ թարմ ծաղիկներ կան, էնպէս լաւ՜։

—Հա, բալիկ ջան, էնտեղ լաւ ծաղիկներ կան, շատ լաւ, անուշ ու թարմ։

—Բազէն լաւ է թռչում, չէ՞, մայրիկ։

—Ի հարկէ, գնդակից էլ արագ։

—Դէ որ էդպէս է, թող բազէն գնայ թէ ինձ և թէ իր հատար թարմ, անուշաբոյր ծաղիկներ բերի։

—Դէ բազէն... բազէն ախր փակւած է վանդակում, նրան բաց թողնել չի կարելի. հայրիկը կընեղանայ...

— Մայրիկ, բազէին ո՞վ է փակել վանդակում։

— Մարդիկ են փակել, բալիկ։ մարդիկ նրան բռնում են անտառում կամ հեռաւոր լեռների քարաժայռերի մէջ և բերում դնում են վանդակում։

Այլևս նա ոչինչ չըհարցրեց մայրիկին։

Փոքրիկ մանուկը, կարծես անբաւական այդ բոլորից, փոքրիկ գլուխը դրաւ մայրիկի ծնկան, ու այնպէս թւում էր, թէ նա նիրհեց իր անորոշ խոհերի հոսանքի տակ։

Թէև նրա կոյս, ջինջ հոգուն անծանօթ էր մարդու բովանդակ հոգեբանութիւնը, բայց և այնպէս նա այժմ շատ բան գիտէր, որ բազէն սիրում է ազատ սաւառնել, թարմ ծաղիկներ է նա սիրում, բայց մարդիկ նրան վանդակի մէջ են փակել։— մարդիկ չար են։ Այս էր նրա եզրակացութիւնը այդ բոլորից։

Մայրը նրան յուշիկ գրկեց և դրաւ իր անկողնի վրայ քնեցնելու։ Բայց մանուկը փոխանակ քուն լինելու, դուրս ընկաւ մօր գրկից ու արագութեամբ դէպի վանդակը սլացաւ։

Նա մեղմիկ բարձրացաւ կանաչ թաղարի վրայ ու զգուշութեամբ բաց արաւ վանդակի դռնակը...

Բազէն ուժգին թափ տուաւ թևերն ու հրեղէն նետի ուժգնութեամբ սլացաւ ջինջ եթերի մէջ...

— Տես, տես, մայրիկ, բազէն ինչպէս է թռչում։ Նա համբուրեց իմ թաթիկն ու այնպէս թռաւ։ Մայրիկ, բազէն թռա՞ւ...

Շահ-Աւրմէն



Մանկական Աշխարհ

№ 7 Պատկերազարդ զարթ ամսաթերթ № 7

Հրատարակում է մասնակցութեամբ ժրաջան աշակերտուհիների եւ աշակերտների։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Ընկերներ!

Այն մեծ և սքանչելի ընդունելութիւնը, որ մեր նորաբողբոջ Մանկական Աշխարհը վայելում է ձեր մէջ, աւելի եռանդ է ներշնչում մեզ ընդարձակելու մեր այս զարթ հանդէսը։ Իսկ սրա համար անհրաժեշտ է, որ դպրոցական բոլոր աշակերտուհիներն ու աշակերտները շտապեն բաժանորդագրուել Աղբիւրին առաջիկայ տարուայ համար։

Այս դեկտեմբերի 23-ին, Աղբիւրի յոբելեանի տարեդարձի օրը, 1910 թուի 5000 բաժանորդների մէջ վիճակ են գցելու 500 մէկը միւսից գեղեցիկ, մանաւանդ մեզ աշակերտներիս էլ շատ հաճելի և անհրաժեշտ առարկաներ։

Եթէ կամենում էք, ամեն կիրակի եկէք մեր խմբագրատունը, և ես ձեզ ցոյց կըտամ վիճակ գցուող բոլոր առարկաները։ Միւս օրերն էլ կարելի է տեսնել, բայց գիտէք, որ ես ազատ չեմ, Սովասիլնայի պանսիոնումն եմ և արդէն փոխուել եմ առաջին դասարանը։

Դեկտեմբերի 23-ին մեր խմբագրատան կից Գրական-Գեղագիտական Սալօնում խնճոյք է լինելու դպրոցական մեր բաժանորդների համար և այսու հրաւիրում եմ ձեզ շնորհ բերել կէսօրից յետոյ ժամը 5-ին։

Առանձին հրաւէրներ չեն ուղարկուիլու։ Առայժմ իբրև լուր միայն հաղորդում եմ, որ շատ կարելի է, ձեզ բոլորիդ էլ հաճելի, մինչև այժմս չըլսուած և չըտեսնուած, մի հրաշալի պարզեւ էլ ստանաք դեկտեմբերի 23-ին։

Նկէք աշխատենք, որպէսզի 1910 թ. Աղբիւրի բաժանորդների թիւը 10,000-ից էլ աւելի լինի։

Խմբ.-հրատ. **Ամբիկ.**

ԺԱՄԱՆՑԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Ծաղրածու MISTER FIPS-*Ն ու իր ձեռնասունները*

Պատիւ ունիմ, պատուարժան թէ արժանապատիւ հանդիսականներ, ներկայանալ և ներկայացնել ձեզ յարգոյապատիւ իմ ընկերներին՝ ազնուատոհմ ռազմիկ սագերին, ոչխարների առաջնորդ մրկրկան այծին, առաւօտեան կոչնակ աքաղաղներին, վայրահաչ տուող Մօպսին, երա-

ժշտասէր Միլօրդին, մաքրասէր, բեղմնաւոր Խոզին և ինձ՝ ձեր խոնարհ ծառայ դերամեծար միստր Եանկի Ֆիպսին։

Մեր գործն ու արհեստը՝ ամբողջ օրը տանջուել, աւրիւն-քրտինքով աշխատել, սովորել, ուսումնասիրել, միմեանց հասկանալ, հասկացնել, որպէսզի երեկոներին, իսկ տօն ու կիրակի օրերին և ցերեկներն էլ ձեզ ծիծաղեցնենք, զարճացնենք։

Իսկ եթէ կամենաք բացի ծիծաղից և իմանալ, որ անբան անասունները ջանք ու աշխատանք գործադրելով ձգտում են ձեզ՝ մարդկանցդ հասկանալ, ենթադրում է ձեր խոնարհ ու նուաստ ծառայ միստր, պարոն Եանկի Ֆիպսը, որ ձեզ, յարգոյապատիւ թէ արժանապատիւ հանդիսականներ, մատուցած կը լինի մի փոքր և ծառայութիւն, այն է՝ անբան անասունների հետ... ներողութիւն, ներողութիւն, խելքին սկսում է զօր տալ միստր Եանկի Ֆիպսը... և ծրագրից դուրս դուրս տալ։

Ուրեմն ըստ ծրագրի։



Ահա նայեցէք և համոզուեցէք, թէ Հռոմի ազատարարների թոռների ծոռների ծոլանդների և պոլանդների արժանաւոր զինուոր-ժառանգները ինչպիսի կարգ ու կանոնով գիտեն քայլել։

Տեսնում էք թնդանօթը. զգոյշ և հանդիստ կացէք, ապա թէ ոչ նրանք թնդանօթը կուղղեն դէպի ձեզ և այնպիսի արշաւանքով կըսլանան ձեզ վրայ, որ միստր Ֆիպսն ինքն էլ լեղապատառ կըլինի։

Ուրիշ բան է մեր գերայարգոյ Մօպսը։ Տեսէք ինչպէս է անմեղ, լուռ սպասում, որ կանգնէ ճիպոտիս վրայ։ Բայց բաւական է մի փոքր աչք ու յօնքով հասկացնեմ, որ իմ ետև, ծաղկի սեղանի տակ ընկած մեր այս անպէտք երկրագունդն իսկ աղմկացնէ։ Օ՜, եթէ իմանաք, թէ ինչպէս է հաչում... Դարթունց շունը դալաթ է տրել սրա կշռին...

Գիտէք, ինչու է այժմ այդպէս սասը կտրել։ Չէ, չըգիտէք։

Նրա համար, որ մի չորացած ոսկոռ է ստացել. այդպէս է մեր պայմանը սրա հետ։ Ոսկոռ պիտի միշտ գցես առաջը. ախր որքան էլ որ չըլինի, շուն է, իր շնութիւնը պիտի անէ։

Այս մաքրասէր, ամեն ինչից խռկող, պճնասէր տիկին Խոզը, որ 12 դոճի միանգամից է աշխարհ բերում, նայեցէք թէ օդում ինչպէս է թաւալւում երբ ես իր դերը գետնի վրայ եմ կատարում։ Ի՞նչ անեմ, շատ եմ աշխատում, որ ինձ նման մարդավարի մարդամէջի երևայ։



Ահա և ազնուազարմ Միլօրդը. սա շատ երաժշտասէր է։ Բայց խօսքը մեր մէջ մնայ, երաժշտութիւնից այնքան է խաբար (տեղեակ), որքան ես ըէխաբար (անտեղեակ) եմ, թէ վաղը դուք ձեր որ կողքի վրայ կըզարթնէք։

Այնուամենայնիւ երգենք ազնուազարմ Միլօրդի համար։

ԵՐԳՈՒՄ Է

Քեզ ասում են մարդիկ Միլօրդ,
Անանի ես, ինչպէս մի լօրդ,—
Միլօրդ, Միլօրդ,
Ինչպէս մի լօրդ:
Միլօրդն ես մեծ ու գոված,
Երեխէքքս՝ մերկ ու սոված—
Մեծ ու գոված,
Մերկ ու սոված։
Չի օգնում ինձ մարդ ասունը,
Բայց օգնում է անասունը—
Մարդ ասունը,
Անասունը...

Պարոն Միլօրդ, խնդրեմ համեցէք վաղը, նուագահանդէսը կըլինի ճոխ ծրագրով։ Այծը կերգէ միայնակ, Աքաղաղները՝ երկուսով, պարոն Բրագիլը կարտասանէ, կըծխէ ու կըպարէ։

Սիկուլի

ԱՂԲԻՒՐԸ դպրոցական աշակերտների և աշակերտուհիների համար ճանապարհածախսով տարեկան **ՄԷԿ Ր.** Նոյն **ԱՂԲԻՒՐԸ** դպրոցների, գրադարանների, հաստատութիւնների համար տարեկան 3 ր.։

Հասցէն՝ Тифлис, Редакція „АГБЮР“.

Հրաւիրում ենք **ԱՂԲԻՒՐԻՆ** և **ՏԱՐԱԶԻՆ** 1910 թ. համար բաժանորդ գրողներին աճապարել, որպէսզի հնարաւորութիւն ունենանք գէթ մօտաւորապէս որոշելու **ԱՂԲԻՒՐԻ** և **ՏԱՐԱԶԻ** յունուարի №№-ի տպելիք օրինակների քանակը և ներկայ տարայ նման ուշ գրող բաժանորդները չը զրկուեն յունուարի №№-ից։

ԱՂԲԻՒՐԻ հեռաւոր այն բաժանորդները, որոնք դադափար չունեն **ՏԱՐԱԶԻ** մասին, կարող են նմուշի համար ստանալ մի որևէ № 50 կոպէկի մարկա կամ դրամ ուղարկելով։

Դրսի բաժանորդներին ներկայ №-ի հետ ուղարկւում են բաժանորդագրական թերթեր, որպէսզի իւրաքանչիւրն իր շրջանում տարածէ **ԱՂԲԻՒՐ** և **ՏԱՐԱԶ**։

ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ դեկտեմբերի 1-ից ի միջի այլ առարկաների, որ 1910 թ. **ԱՂԲԻՒՐԻ** և **ՏԱՐԱԶԻ** բաժանորդների մէջ վիճակ պիտի գցուեն, հանդէս են դրուելու ՕԴԱՄԵՔԵՆԱՆԵՐԻ զանազան տեսակ մօդելներ։

ԲԱՑԻԱՄԷ

1910 թ. բաժանորդագրութիւնը

XXVIII Տարի — **ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ** — XXI Տարի

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. **ԱՂԲԻՒՐ** դպրոցական աշակերտուհիների և աշակերտների համար տարեկան ՄԷԿ ՐՈՒԲԼԻ (1 ր.)։

2. **ԱՂԲԻՒՐ** և **ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ** ս. ՍԱՀԱԿԻ, ս. ՄԵՍՐՈՊԻ և ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ մեծադիր 3 պատկերներով տարեկան ԵՐԿՈՒ ՐՈՒԲԼԻ (2 ր.).

3. **ԱՂԲԻՒՐ** դպրոցների, գրադարանների, հասատաութիւնների և հասակաւոր բաժանորդների համար 3 ր. (Արտասահման 5 ր.)

4. **ԱՂԲԻՒՐ** և **ՏԱՐԱԶ**, Աղբիւրի Ակունք դպրոցական աշակերտի հասցէով, ընտանիքների համար, տարեկան 10 ռուբլու փոխարէն 5 ր. Մինչև դեկտեմբ. 15-ը ստորագրուող բաժանորդներին կուղարկուին և պրէմիաները՝ ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ բազմագոյն ձիթանկար և ս. ՍԱՀԱԿԻ, ս. ՄԵՍՐՈՊԻ, ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ մեծադիր 4 պատկերներն էլ։ Դեկտեմբերի 15-ից յետոյ բաժանորդագրուող աշակերտները վճարում են այդ պրէմիաների համար մէկ տարի, այսինքն փոխանակ հինգ ռուբլու ՎԵՑ ՐՈՒԲԼԻ։

5. **ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ**, Աղբիւրի Ակունք, Յաւելուածներ եւ պրէմիաներ դպրոցների, հասատաութիւնների, գրադարանների և հասակաւոր բաժանորդների համար՝ տարեկան 10 ր. Արտասահման 18 ր. կամ 50 ֆր.

ԱՊԱՆԴԷՆ կամ մաս-մաս վճարող բաժանորդ չէ ընդունուիր։

Հասցէն՝ Тифлис, *Редакція* „АГБЮР-ТАРАЗ“.

TIFLIS. (Caucase) Rédaction „AGBÜR-TARAZ“

ԱՄԵՆԸ ԸՆՏԻՐ! ԱՄԵՆԸ ՆՈՐՈՒԹԻՒՆ!

Որսի, Ապորտի եւ Ճանապարհի համար

զէնքի, ճանապարհորդական եւ ապորտային առարկաներ։ Որսորդական և ապորտային հագուստ. զլխարկներ, խաղեր, մարմնամարզական առարկաներ., անգլիական մանր իրերներ կաշուից, մետաղից դուք կրգտնէք Եւրոպայի ամենախոշորագոյն զէնքի

Ա. Բիտկովի պահեստում

А. БИТКОВА.

Москва. Магазин: Больш. Лубянка, против Кузнецкаго моста № 8.

Գրասենեակը և խոշոր պահեստը՝ Больш. Лубянка. д. № 20.
Պահանջեցէք № 8 պրէյսկուրանտ, իսկ ով այդ ունի, սրա յաւելուածը։ (4—4)